Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

10392

Վ.Լ. ԳԻԼԵՍԱՐՕՎԱԿԻՅ

ՓԱԽՍՏԱԿԱՆ



ՀՐԱՏ. ՄԱՍԿՈՒԱՅԻ ՄԻ ԽՈՒՄԲ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ

19 NOV 2010

891.71-3
Գ. 57

1001/457

ՎԼ. ԳԻԼԵԱՐՈՎՍԿԻՅ

ՓԱԽՍՏԱԿԱՆ



Հայկական Գրադարան
Армянская Библиотека
Հանրային Գրադարան
Общественная Библиотека
Հ/Հ 1922

МОСКВА,
Срѣтенка, Б. Сухаревъ пер., д. № 26, Типографія Х. БАРХУДАРЯНЦЪ.
1910 Г.

ՎԼ. ԳԻԼԵՍՊՈՎՍԿԻՑ

ՓԱԽՍՏԱԿԱՆ

Գարուն էր։

Դարևոր մէրիում տեղ-տեղ սպիտակին էր տալիս ծիւնը, որի երեսին ցրուել էին եղևնի դեղնած փշերը, իսկ ծորերի լանջերին՝ կանաչ խոտերի տարանքներում՝ մոխրագոյն ճախերի տակին երևում էին ծնծաղիկները։

Փոքրիկ եղևինների դագաթներն արծակել էին մատաղ ծիլերը—պայծառ կանաչ գոյնով և ծայրերին մոխրագոյն, կլորակ գնտակներով։ Ադամանդէ արցունքները փայլում էին մայրիի, եղևնիի և բարդիի բներին։ Մատաղ թղթին կանաչացրել էր իւր դինեմոնագոյն կոկոնների ծայրերը, իսկ ամբողջ շրջապատը, եղրափակուած հինաւուրց ծառերի՝ սևացած բների շարաններով, ծածկուել էր կանաչ զմրուխտով։

Առաւօտները՝ մէրիի շրջակայքը թնդում էր հազարաւոր թռչունների երգերով։ Օդը տաքացած արեգակի պայծառ ճառագայթներով, լեցուն էր դարնան անոյշ բուրմունքով, լեցուն նոր ծաղկող կեանքով, լեցուն կարող ոյժով։

Մէրին ոչ մի ժամանակ այնքան լեցուն չէ լինում, ինչպէս որ դարնանը։

Եւ որքան հեռու էր մարդկային բնակութիւնը, մէրին այնքան աւելի գեղեցիկ էր, աւելի խաղաղ և աւելի մեծափառ։

Ամենախուլ անկիւնում ոչ-ոք չի խանդարիլ նրա խաղաղ կեանքը, ոչ-ոք չի խանդարիլ նրա համերգը, նրա երգերի ներդաշնակութիւնը:

Իւրաքանչիւր թռչուն երգում էր իւր ձևով: Կայտառը բարկացած՝ թրրխկացնում էր ծառերի բները, որսում էր ղեռուններ, ապա զարմանալի անցքեր էր շինում բների մէջ: Կուկու՝ն լաց էր լինում, քամին փչում էր և բարձր ծառերի գլուխները հառաչում էին նրա հետ:

Ամեն մի ծայն իւր կամքով, բայց ընդհանուր ղեկավարը մէրին էր: Այդ բոլոր ծայները նա միացնում էր իւր մէջ, որից ապա հնչում էր մի սքանչելի համերգ:

Մարդն անկշտում լսում է դարնան մէրիի վայրենական, բայց հրապուրիչ համերգը և լսում է այնպէս անկշտում, որ իւր ամբողջ կեանքում նրան ամենուրեք միշտ միևնոյն համերգն է թւում:

Եւ որքան նա ախուր է լինում, այնքան այդ համերգը կենդանանում է նրա յիշողութեան մէջ: Եւ այն մարդը, որ կամ հիւանդ պառկած է և կամ ընկած է ժանտահոտ բանտի մի անկիւնում, նա անշուշտ կասէր.

— Գէթ մի օր լսէի մէրիի համերգը, լսէի թէ ինչպէս կուկու՝ն կանչում է, կամ կայտառը թրրխկացնում և կամ ինչպէս քամին վզզում է ծառերի գլուխներով: Մի անգամ ևս լսել և ապա թէկուզ մեռնել:

Եւ մէրին զրաւում է մարդուն, զրաւում է ևս առաւել ժանտահոտ բանտի մէջ ընկածին, զրաւում է գէպի ազատ տարածութիւնը:

Ենթարկւում է երբեմն մոլեշրջիկը մարակների հարուածներին, կամ ժպրհում է պահապանի հրաղէն

գնտակին հանդիպել, այդուամենայնիւ նա մղում է գէպի մէրին, կամենալով գէթ մի օր լսել կուկու՝ին, լաց լինել նրա հետ և, ինչպէս նա — անօթևան, կամ մեռնել քաղցից, կամ հէնց նորից վերադառնալ գէպի բանտ, ոգևորուած մէրիի ազատութիւնով և յուսավառուած մինչև հետևեալ դարունը, մինչև վախչելու ապագայ աջողութիւնը:

Պատահում էր, որ կուկու՝ն կանչում էր երիտասարդ մոլեշրջիկին և իսկոյն նրա միտքն ու հոգին մղում էր գէպի հեռուն, գէպի հայրենիքը, որին մօտենալու քչերին էր աջողւում:

Մի երկու անգամ անվախ երիտասարդը կփորձէ անցնել մէրիի անսահման տարածութիւնը, երկու անգամ կրկին ազատութիւնը կորցրած՝ կվերադառնայ բանտը, իսկ երրորդ անգամ գուցէ և հայրենիքն էլ մոռանայ, այսուամենայնիւ նա կձգտի գէպի մէրին, կուզենայ դալ և լաց լինել նրա հետ իւր հայրենիքի մասին:

Եւ բարեսիրտ քաջերին դարունը մղում է արկթէ վանդակներից ու սուր սուլիններից գէպի դուրս: Եւ այդ ժամանակ երկիւղալի չէ նրանց համար բարձրը պատերը և ոչ էլ սոսկալի է մահը: Նրանք իրանց էլ չեն մտաբերում, նրանք յափշտակւում են բուրաւէտ ու արձակ մէրիի ձգողական ոյժով:

Ազատ. ...

Ահա այն ազատութիւնն ոբտեղ է:

Ախ, միանգամայն չես կշտանում.—բուրում են և եղևինը և թղթին... իսկ այնտեղ. ...

Նա հառաչեց և սուզուեց մտածմունքի մէջ:

Դա մի լեցուն, երեսնամեայ տղամարդ էր՝ բանտարկուածի կապայով և գլխարկով:

— Ախ, ինչ լաւ է...

Նա խոր յոգոց հանեց։

— Բայց որքան արժեց մինչև այստեղ հասնելը։ Այո, մինչևանգամ սարսափելի է։ Բայց ի՞նչ կայ սարսափելի.—գնասակ, մահ և ուրիշ ոչինչ։ Սարսափելին այնտեղ է—այնտեղ—դեռևավորերում, որտեղ մէկ էլ տեսար ջարդուեցիր հողի տակ՝ ինչպէս մի որդն իւր բնում՝ մթութեան մէջ։ Կիթեռ և Աստծու լոյսն էլ չես տեսնիլ։ Մի գնասակ—թրրրխկ, և պրծա՜ւ։ Իսկ այնտեղ՝ ամբողջ կեանքը հողի տակ և էլ արև տեսնելու ոչ մի յոյս։ Ամբողջ կեանքը.…

Նա սուզուեց մտածմունքի մէջ։

— Իսկ արեգակը… արեգակը…

Մոլեշրջիկն աչքերը հովանաւորեց իւր ձեռով և նայեց դէպ արևմուտք։

Իսկ այնտեղից, ծառերի թաւուտ արանքով խուժում էին մայր մտնող արեգակի ճառագայթները։ Նրանք խաղում էին, սահում էին ծառերի բների վրայով, ապա իջնում էին նրանից և, կանաչները դուրդուրալով, անցնում ծառերի ճղների արանքները։

Ճառագայթները հեզահեաց աւելի վառւում էին։ Վերջապէս ծառերի արանքներից երևաց արևի դէմքը։ Նա շողում էր ինչպէս ծուլուող մետաղ և տարածում էր աչք ծակոտող ցոլքերը։

Մոլեշրջիկն անդունդի եզրին կանգնած՝ աչքերը ճպճպում էր և շարունակում էր նայել արեգակին, որ արդէն անցել էր մերիի գլխի վերև։

Որքան արեգակը առաջ էր սահում, ծորն այնքան աւելի և աւելի էր մթնում։

Մէկ էլ յանկարծ մերին ու ծորակը սևացան — ասես մի սև վարագոյր փռուեց լոյսի դիմաց։

Մոլեշրջիկը ցնցուեց։ Նա շօշափեց իւր դրպանի լուցկին և, չոր բանջարներից բռնելով, իջաւ ծորի խորքը։

Ներքևում աւելի ցուրտ էր։ Այնտեղ ծիւնը դեռ սպիտակին էր տալիս։ Մոլեշրջիկը նայեց անդնդին և փոխեց իւր դիտաւորութիւնը։ Նա նորից բարձրացաւ վերև, ընտրեց մի հարթ տեղ, ճախեր հաւաքեց և այրեց։

Հազիւ նկատելի, սպիտակագոյն դժերով կրակն անցաւ չոր բանջարների երեսով և ապա որքան երկինքը մթնում էր, կրակի դժերն էլ այնքան կարմրում էին։ Ծուխի քուլաները չքանում էին մթութեան մէջ, երբեմն շողում էին դէպի վեր բարձրացող կայծերի ցոլքերով։ Իսկ երբ մոլեշրջիկը արոբում էր խարոյկը և աւելացնում էր չորացած խաշամը, նրանք բաժանւում էին արնանեղկ լեզուներով։

Նա քսակից հանեց հացը, զետեղեց ճիպոտի ծայրին և սկսեց տաքացնել կրակի վրայ։ Հացը ծուխ արձակեց, ճաթճթեց և թեթևակի այրուեց։

Մոլեշրջիկն ախորժակով հոտ քաշեց, գլխարկը վերցրեց, դրեց ծնկների վրայ, երեսին խաչ հանեց ու սկսեց ուտել։

Զով քամին փչեց ծորի միւս կողմին և աղմկեց բարձր կատարների վրայ։

— Մեր Ռուսիայի քամին է, — արևմաքից… Ա՛յ, ինչպէս տաք է։

Նա չոր խաշամն աւելացրեց խարոյկի մէջ, գլխարկը խրեց մինչև ականջները, եղևնի ճղներից ու ճախերից անկողին շինեց և, ամուր փաթաթուելով բանտարկեալի լայն կապայի մէջ, պառկեց։

— Տուն է, կապայ չէ…։ Շնորհակալ եմ բանտապահից, կարծես գիտէր, որ պիտի հարկաւորուի,— նորը տուաւ։

Ասաց նա իւր մտքում և ժպտաց։

Եւ նա աչքի առաջ բերաւ մեծ քթով բանտա-

պահին, որ միշտ երկիւղը սրտում, չարանում էր բանտարկեալների վրայ՝ ամեն մի չնչին բանի համար և իշխանութեան առաջ դողում էր ինչպէս տերև: Նա յիշեց և վերջին փախուստը փայտէ փտած բանտից:

Գիշերն էլի այնպէս մութն էր: Նա՝ դաղտնատան պատուհանի ժանգոտած վանդակամածով նայում էր դէպի դաշտը, որի վերջում կապտին էր տալիս անտառման մէրին:

Պատուհանի ներքևից ընկած էր պարիսպը՝ հիւսուած տէղածև փայտերից, որի միւս կողմից երևում էին՝ անց ու դարձ անող սուինի ծայրը և կեղտոտ ու մրոտ լապտերը:

Նա երկար ժամանակ նայեց մէրիին, յանկապատին և սուինին.

Այդ սուինի ծայրից կարելի է հասկանալ թէ՝ պահապանը որ կողմին է. հեռու է, թէ մօտիկ:

Այն ժամանակ գիշերը մութն էր, ամպամած էր, լապտերն առկայծում էր մի կարմիր կէտով, դարնան թանձր թխպերի արանքում:

Իւր սպիտակեղէնը նա ոլորեց, պարան շինեց, այդ պարանը կապեց պատուհանի վանդակամածին, ապա իւր կապայի տակ՝ հաշուում թաղցրած մի փայտ բերաւ, պնտացրեց պարանի արանքում և սկսեց ոլորել: Պարանն ոլորում էր, դրսից մաքուր օդը մտնում էր նրա կուրծքը և ոգևորում ու սիրտ էր տալիս նրան: Նա երկար աշխատելուց՝ յոգնել ու քրտնել էր:

Վանդակամածում մի անցք դոյացաւ, այնպէս որ գլուխն ազատ կարող էր անցնել նրա արանքով:

Նա մտաբերեց թէ ինչպէս էին ծփծփում պահապանի կապայի փէշերը, ինչպէս շողում էր սուինը: Նա մտաբերեց խրոխտ քայլեր, աղմուկ, աղաղակ,

հրացանի ծայներ և ականջի տակ դնտակների վղղոց:

Բայց այս բոլորը նա յիշում էր աղօտ կերպով, կարծես դրանք շատ վաղուց են տեղի ունեցել և ոչ երեք օր առաջ:

Իսկ բարձունքների վրայ քամին դեռ դոռում էր:

Մոլեշրջիկը կիսաքնած լսում էր այդ ծայները, որ յիշեցնում էին շատ ու շատ հեռու անցած գիշերներ:

Մօտիկ խարոյկի պայծառ կրակը տաքացնում էր նրա հակառը, իսկ փակուած կոպերի արանքից նա տեսնում էր, կամ աւելի լաւ է ասել դդում էր՝ սկզբում կարմիր, իսկ յետոյ մանուշակագոյն արշալոյսը: Նրա աչքերը ծանրացել էին և նա զուր էր ջանում նրանց բաց անելու:

Ամեն մի վայրկեան, երբ նա աշխատում էր կոպերը բաց անել, արշալոյսն աւելի վառ փայլ էր ստանում և ամուր ծակոտում էր աչքերն ու մարմնու բոլոր անդամները:

Նա կարծես մոռացութեան մէջ էր: Գլուխն այրուում էր, ուղեղը սղմուում, կուրծքը ճնշուում և ամեն տեսակ ցնորամիտ պատկերներ անցնում էին նրա երևակայութեան մէջ:

Այդ պատեհին նա մոռանում էր ամենը, ամենը...

ԵՐԳ

Կար ժամանակ այս աշխարհում,
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

Մեծաժաւալ անապատ է: Վերջը չի երևում:

Եւ հարթ է, և հաւասար, կոլոր, ինչպէս մի կանաչ սկուտեղ:

Միայն՝ տեղ-տեղ՝ նրա երեսին անապատային դերեզմաններ են ցրուած:

Եւ մի ուղիղ կածան՝ լայն դժոխ՝ ծգուած կարել է նրան:

Այդ կածանի մօտ մի դերեզման էր ընկած:

Եւ դերեզմանի մօտ նստած էր մի կոյր ծերունի ու երգում էր խաղաղ ու տխրամրմունջ ձայնով.

Կար ժամանակ այս աշխարհում
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

Իսկ ինքն անլոյս աչքերով երկնքին էր նայում:

Եւ այնպիսի մի շնորհ էր խաղում նրա դէմքին —ասես նա՝ անտեսանելի երկնքում՝ լուսաւոր արքայութիւնն է նշմարում:

Եւ ով և անցնէր այն ոտնակոխ կածանով,—ծիով լինէր, թէ յետիոտ,—ամենքն էլ կանգ էին առնում ծերունու մօտ, ամենքն էլ լսում էին նրա տխրամրմունջ երգը և տանում էին իրանց հետ:

Մի անցուոր վաճառական, կամ մի լայներես զալմուխ, կամ մի ուխտաւոր կին, որ իւր մեղքերը

ափիոնի շաղերից առած՝ Կիեւի սուրբերին էր տանում —նրանցից մխիթարութիւն որոնելու՝ իւր խաւար կեանքի համար, կամ մի փախստական զինուոր, կամ որևէ դաղութի գերմանացի. կամ մի հարուստ մարդ՝ քառածի կառքով անցնելիս,—բոլորն էլ կանգ էին առնում այդ դերեզմանի մօտ: Եւ որն արծաթ, որը պղնձէ դրամ, որն էլ հացի կտոր դնում էին ծերունու ծեռին:

Եւ ծերունին բաժանում էր այն բոլորն՝ անտուն, քաղցած մոլեշրջիկի հետ, և, երկնքին նայելով, նրան - աշխարհի վրայ դայրացածին՝ իւր երգն էր երգում.

Կար ժամանակ այս աշխարհում
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

Եւ դնում էր մոլեշրջիկը,—մի բարի ու կայտառ երիտասարդ, անցնում էր ճանապարհը և ծերունու երգն էր մռմռում:

Եւ կպատահի, որ մռայլոտ դիշերին նա իւր չար ծեռը կբարձրացնէ որևէ մէկի վրայ և դանակ կշողացնէ —արիւնից ժանգոտած դանակ, բայց կմտաբերէ անապատի ճանբան և դերեզմանի մօտ նստածծերունուն:

Ու անոդոք ծեռը կթուլանայ, արիւնից ժանգոտած դանակը կընկնի մի կողմ ու դողդոջուն շրթունքները երգել կկամենան.

Կար ժամանակ այս աշխարհում,
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

Եւ նա կհեռանայ չարիք անելուց, հանդարդուած ծերունու տխրամրմունջ երգով:

Իսկ մթին դիշերներն՝ այն դերեզմանից՝ պայծառ ճանճանչներով լոյս էր տարածւում:

Գերեզմանների անապատում,—վերջը չի երևում:

Եւ այն շիրիմներում յաղթողներն էին պառկած:

Ամենքն էլ նշանաւոր պետեր էին, ամենքն էլ ոսկեհուռ զրահներով զարդարուն:

Արևելքից եկան վայրենի օրդանները: Նրանց ծիերի երամներն անհամար էին: Որտեղով նրանք անցնէին, այնտեղ աւանդ չէր մնալ, բայց որտեղ տապաւար շինէին, այնտեղ սար կկանգնէր: Հէնց որ նրանց պետը մեռնում էր, նրան թաղում էին փոսի մէջ... Այն փոսի յատակը ծածկում էին քարերով և այն քարերի վրայ ծղում էին պետին ու նրա հետ և նրա զէնքերը և բոլոր աւարը—ոսկու կոյտեր:

Եւ այնքան քար ու հող էին բերում և այնքան թափում էին դերեզմանի վրայ, մինչև որ այն դերեզմանը դառնում էր մի ահագին, կլորակ սար:

Որպէսզի յետնորդները տեսնեն և իմանան թէ որքան մեծ հերոս է այն բլրի տակ պառկած...

Իսկ յետնորդները...

Դարերն անցան, այն բոլորը քանդեցին, ոսկորներ հանեցին և զէնք ու զրահը ու բոլոր ոսկին տարան հեռու-հեռու երկիրներ:

Եւ հասաւ մի այնպիսի ժամանակ, որ անապատը հերկուեց և այն դերեզմանների վրայ բանջարներ բուսան:

Իսկ կածանի մօտ ընկած դերեզմանը դեռ անվնաս մնում է:

Դեռ կոյր ծերունին հին երգն է երգում.

Կար ժամանակ այս աշխարհում
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

Եւ այդ երգը պահպանում է ճանրի մօտ ընկած դերեզմանը:

Եւ ոչ-ոք նրան ձեռք չի տալիս, ոչ-ոք նրա ներսը չի նայում:

Եւ ինչ կայ վերցնելու բարի մարդուց: Նա ոչ հին զէնք ունի, ոչ էլ ձեռք բերած ոսկի:

Եւ նրա դերեզմանը մնում է կանգնած ու անվնաս:

Նաև՝ ո՞վ է այնտեղ թաղած.—անյայտ է:

Կամ եղե՞լ է, արդեօք, այնտեղ որևէ մէկը:

Բայց միևնոյն չէ՞:

Չէ՞ որ մի որևէ տեղ, կամ մի որևէ ժամանակ ապրել է մէկը, որին և երգ են ձօնել:

Բայց թէ նա ո՞րտեղ է ապրել, ո՞րտեղ է մեռել, կամ ո՞րտեղ են նրա ոսկորները.—էլ ինչ հարցնել:

Իսկ որ նա բարի է եղել՝—այդ յայտնի է:

Նրա ոսկորները չկան, բայց փառքը երգւում է:

Անապատի դերեզմանը աչքի լուսով է լուսաւորւում:

Հանդարտ ու տխրամրմունջ երգը հնչւում է այն շիրմից բարձր, հնչւում է կապոյտ երկնքի ստուերում:

Եւ կոյրը երկնքին է աչքը դարձնում, ուրեմն նա տեսնում է, ո՞րտեղ է այն երգի ճանրան:

Եւ այն երգը հնչւում է երկրի շուրջը:

Ամենքն, ով լսել է այն՝ անապատում՝ տարել է իւր հետ և քաղաքները և հեռաւոր գիւղերը և ամէն տեղ այն երգում են և ծանր օրերին և բախտաւոր ժամերին:

Իսկ կոյրը նստած է, հայեացքն երկնքին յառած: Եւ ժողովուրդը միշտ գալիս է նրա մօտ և կոյրն ամենքի համար միշտ միևնոյնն է երգում, միևնոյն դերեզմանի վրայ.

Կար ժամանակ այս աշխարհում
Մի բարեսիրտ մարդ էր ապրում:

ԼԵՌՆԵՐՈՒՄ

Գիշերը մութն է, իսկ մութն աւելի՝
Ինծանից ներքև՝ մռայլ անդնդում,
Անդունդն էլ հուժկու և սարսափելի,
Ուր և գաղաններ և դեռն որոտում։
Եւ յուզուած դրկում ալեաց դարևոր՝
Այնտեղ քարերը ծայնում, աղմկում.
Եւ այն ծայներում հանց երաց անցեր,
Շարան պատկերներ աչքիս դէմ կանգնում։
Պատենեկութեան օրերում լսած՝
Բոլոր պատմութիւն մեռած հայրերի,
Իմ յիշողութեան մէջ եկան պարզուած,
Այն զրոյցներից դեռի ջրերի։
Լեռներում սուիններ ու կապաներ,
Վեհ ազատութեան ծայներ՝ կուռոցին,
Եւ հրազէնի ահեղ շաչիւններ,
Ամեն մի կրակ մահ բերում քաջին։
Մէկը կուում էր, եղբօրը համար
Մէկը հայրենեաց վշտերը յիշում.
Բայց հէգ զինուորը եղաւ դնտակհար՝
Եւ մնաց ընկած իւր տաք արիւնում։
Նա ի՞նչու համար այդպէս մարանչեց,
Ի՞նչը զրաւեց նրան այդ կուում.
Զէ՞ որ միմիայն հէգ որդին թողեց,
Մատաղ կնոջ հետ՝ նա այնտեղ հեռուում։

Քամին ծորի մէջ իւր երգն է երգում,
Ալիքը կրկնում քամուն կատաղած,
Ոչ ուրախութիւն, ոչ սէր այն երգում.
Միայն դառնութեամբ այն երգը լցուած։
Լսում եմ... բոլորը թրի տակ ընկան,
Քաջի մահուան հետ կամքը խորտակուեց,
Մարեց մարտիկի փառքը յաւիտեան,
Ոսկու, կեղծ պատուի առաջ ընկճուեց։
Եւ շուքը կորած որդոց անծնուէր,
Որոնք կռուէցին հայրենեաց սիրով,
Մարդիկ մոռացան.—լոկ դեռի ջրեր
Սուզ են մրմնջում նոցա ցաւերով։
Եւ հոգեհանգիստ քամին շշնջում,
Դեռն էլ դեռ երգում բախտը անցեալի,
Այն սարսափելի մթին անդնդում
Ցիշում է նոցա վիճակ ողբալի։
Նա կկցորդէ փոթորիկներին
Իւր տխրամրմունջ, ողբալից երգեր.
Եւ ով սիրում է խեղճ անբախտներին,
Նա կհասկանայ դեռի հառաչներ։
Անարդարութեան ով չի լուռ մնում,
Որ չի վաճառում իրան դրամով,
Նա լաց կլինի դեռի հետ արտում,
Նա ընկածներին կյիշէ պատուով։



***

Հանք ու նիւթ ենք՝—մենք՝ ապագայ
Գեղարուեստի մարդկանց համար,
Ոսկու մաս ենք.—մենք՝ վայրենի
Լերանց միջից՝ եւաճ աշխարհ։
Որ մեզանից անդրիադորժը
Սերունդներին ծուլէ կուռքեր,
Եւ նոքա միշտ յղեն դէպ մեզ
Իրանց սրտից սուրբ աղօթքներ։
Մեզնից սովրեն երկիրպագել
Փշուրներին սարկուեթեամբ,
Որ տարապէպ մի փոթորկից
Փայլեն անբիծ ճշմարտութեամբ։

***

Լոյսը հասնում է իւր մօրը մրտին,
Տեղ-տեղ ոսկեվառ դծեր թողնելով,
Ու ծոցն է մտնում մոայլ ամպերին,
Մթութեան հեար անմիտ կռուելով։

Այսպէս մեր կեանքում կարճ ժամանակներ...
Վեհ ճշմարտութեան ճանանչը մարում,
Եւ անհետանում ինչպէս երազներ՝
Մեր կենաց ամպի դժնեայ խաւարում։

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ
7/31 1922

Ազգային գրադարան
NL0311456

ԳԻՆՆ Է 5 ԿՈՊ.

89171
9-57